



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594-013
Էլ. փոստ suren.krmoyan@justice.am

N°

« 04/16.2/52649/18
05 04 20/18 »

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ԶԱԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Զայան

Ի պատասխան Ձեր՝ 2018 թվականի մարտի 19-ի թիվ 18-29 գրության, հայտնում ենք, որ բժշկական քարտի վարման, պահպանման և դրանում պահվող տեղեկությունների ծանոթանալու վերաբերյալ դրույթները սահմանվում են ՀՀ կառավարության 2006 թվականի՝ մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելված N 1-ով (այսուհետ՝ Որոշում): Որոշման 51-րդ կետի համաձայն՝

«Բժշկական քարտը համարվում է բժշկական գաղտնիք պարունակող փաստաթուղթ և կալանավորված անձին կամ դատապարտյալին առձեռն չի տրվում: Բժշկական քարտերը պահվում են բժշկական սպասարկման բաժնում կամ բաժանմունքում կամ խմբում՝ չհրկիզվող պահարանում, որոնց հաշվառման և պահպանման համար պատասխանատու է հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը: (...)

Բժշկական քարտում պարունակվող տեղեկություններին ծանոթանալու նպատակով կալանավորված անձին կամ դատապարտյալին, ինչպես նաև նրանց գրավոր համաձայնությամբ մատնացույց արված անձանց տրվում են բժշկական քարտից քաղվածք կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի մասին:»:

ՄԱԿ-ի կողմից ընդունված Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների (այսուհետ՝ Նելսոն Մանդելայի կանոններ) 26-րդ կանոնի 1-ին կետով սահմանվում է, որ բժշկական ծառայությունը պետք է բոլոր բանտարկյալների համար կազմի և վարի ստույգ, թարմացվող և կոնֆիդենցիալ անհատական բժշկական քարտեր և բանտարկյալների պահանջի դեպքում պարտավոր է ապահովել հասանելիություն՝ իրենց բժշկական քարտերին: Բանտարկյալը կարող է թույլատրել երրորդ անձի՝ ծանոթանալ իր բժշկական քարտին:

Նելսոն Մանդելայի կանոններով նախատեսված վերը նշված դրույթն իր արտացոլումն է ստացել Որոշման 51-րդ կետում: Վերոհիշյալ իրավական նորմի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Նելսոն Մանդելայի կանոնների 26-րդ կանոնով սահմանված դրույթի սկզբունքային պահանջը յուրաքանչյուր բանտարկյալի համար անհատական և կոնֆիդենցիալ բժշկական քարտեր կազմելն ու ճշգրիտ վարելն է, ինչպես նաև դրանց ծանոթանալու համար բանտարկյալներին ու նրանց կողմից լիազորված անձանց ծանոթանալու հասանելիությունն ապահովելն է:

Հետևաբար, վերոհիշյալ նորմով ապահովված իրավունքի իրացման առումով էական չէ, թե բանտարկյալը կամ նրա կողմից լիազորված անձը կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի մասին բժշկական քարտում զետեղված տեղեկատվությանը ծանոթանում է անմիջականորեն բժշկական քարտից, թե դրանից կատարված քաղվածքից:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ Որոշման հավելված N 1-ի 51-րդ կետով սահմանված իրավակարգավորումները բխում են Նելսոն Մանդելայի կանոններից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ